ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԲԴԽ-24-Ո-57
2024թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԾԱԽՍԵՐԻ ԱՌԱՆՁԻՆ ՏԵՍԱԿԻ ՆԱԽԱՀԱՇԻՎՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 89-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետով, 94-րդ հոդվածի 1-ին մասով, Կառավարության 2018 թվականի հունիսի 15-ի թիվ 706-Ն որոշման հավելվածի 9-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով §Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 2323-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին¦ Կառավարության 2024 թվականի փետրվարի 15-ի թիվ 223-Ն որոշումը՝ Բարձրագույն դատական խորհուրդը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

1. Հաստատել 2024 թվականի պետական բյուջեով հատկացված «1015 սոցիալական փաթեթների ապահովում» ծրագրի «12001 Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում» միջոցառմամբ նախատեսված՝

1) Բարձրագույն դատական խորհրդի աշխատակազմ՝ Դատական դեպարտամենտի 2024 թվականի ծախսերի նախահաշիվը՝ համաձայն հավելված 1-ի.

2) Վճռաբեկ դատարանի 2024 թվականի ծախսերի նախահաշիվը՝ համաձայն հավելված 2-ի.

3) Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 2024 թվականի ծախսերի նախահաշիվը՝ համաձայն հավելված 3-ի.

4) Վերաքննիչ քրեական դատարանի 2024 թվականի ծախսերի նախահաշիվը՝ համաձայն հավելված 4-ի.

5) Վերաքննիչ վարչական դատարանի 2024 թվականի ծախսերի նախահաշիվը՝ համաձայն հավելված 5-ի.

6) Վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի 2024 թվականի ծախսերի նախահաշիվը՝ համաձայն հավելված 6-ի.

7) Վարչական դատարանի 2024 թվականի ծախսերի նախահաշիվը՝ համաձայն հավելված 7-ի.

8) Սնանկության դատարանի 2024 թվականի ծախսերի նախահաշիվը՝ համաձայն հավելված 8-ի.

9) Հակակոռուպցիոն դատարանի 2024 թվականի ծախսերի նախահաշիվը՝ համաձայն հավելված 9-ի.

10) Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի 2024 թվականի ծախսերի նախահաշիվը՝ համաձայն հավելված 10-ի.

11) Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի 2024 թվականի ծախսերի նախահաշիվը՝ համաձայն հավելված 11-ի.

12) Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2024 թվականի ծախսերի նախահաշիվը՝ համաձայն հավելված 12-ի.

13) Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2024 թվականի ծախսերի նախահաշիվը՝ համաձայն հավելված 13-ի.

14) Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2024 թվականի ծախսերի նախահաշիվը՝ համաձայն հավելված 14-ի.

15) Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2024 թվականի ծախսերի նախահաշիվը՝ համաձայն հավելված 15-ի.

16) Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2024 թվականի ծախսերի նախահաշիվը՝ համաձայն հավելված 16-ի.

17) Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2024 թվականի ծախսերի նախահաշիվը՝ համաձայն հավելված 17-ի.

18) Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2024 թվականի ծախսերի նախահաշիվը՝ համաձայն հավելված 18-ի.

19) Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2024 թվականի ծախսերի նախահաշիվը՝ համաձայն հավելված 19-ի.

20) Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2024 թվականի ծախսերի նախահաշիվը՝ համաձայն հավելված 20-ի.

21) Դատական կարգադրիչների ծառայության 2024 թվականի ծախսերի նախահաշիվը՝ համաձայն հավելված 21-ի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ **Կ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**

2024թ. մարտի 14
ք. Երևան